ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2019թ. Հունիսի 6-ին կնքված N ՍԱԾ ԲՄԾՁԲ-19/1 գնման պայմանագրի

ք. Երևան «26» « 06 » **2019թ.**

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վ. Բաբաջանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Էտիբարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 06/06/2019թ. կնքված N ՍԱԾ ԲՄԾՁԲ-19/1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1. Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ հավելված 3-ը համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի 4.2 կետը հաստատել նոր հետևյալ խմբագրությամբ. «4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:»

1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սոցիալական ապահովության ծառայություն	«Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ
ՀՎՀՀ 02505511	Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011026797	Հ/Հ 16063010968600
	ՀՎՀՀ00145026
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Կ.Տ.

Հավելված 1
« 06» « հունիսի » 2019թ. կնքված
N ՍԱԾ ԲՄԾՁԲ-19/1
գնման պայմանագրի հիման վրա
«26» « 06 » 2019թ. կնքված համաձայնագրի

*ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ծառայության														
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92511110/506	Արխիվային ծառայություններ	-	-	-	-	-	-	34920000	34920000	34920000	69840000	69840000	69840000	69840000

** Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011026797

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ
Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ
Հ/Հ 16063010968600
ՀՎՀՀ00145026

(ստորագրություն)
Կ.Տ.